ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ ՝՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ,, ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Բանավոր խոսքի հմտության զարգացումը ընթերցանության մեթոդով**

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ

ԴՊՐՈՑ՝ ԾՈՎԱՍԱՐԻ Բ.ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Մարտուն 2022

Բովանդակություն

1. Ներածություն 3-5

2. Գրական ակնարկ 6-9

3. Փորձարարական հետազոտություն 10

3.1. Խմբի նկարագիր 10

3.2.Փորձարարական դաս 11-13

3.2.1.Փորձարարական դաս-1.....14

3.2.2.Փորձարարական դաս-2.....15

3.2.3.Փորձարարական դաս-3.....16

4.Վերլուծություն 17

5.Հավելված 18-20

1.Դասապլան-1.....18

2.Դասապլան-2.....19

3.Դասապլան-3.....20

6.Գրականության ցանկ 21

1.Ներածություն

Տարրական դպրոցում հետազոտություններ կատարելու առանձնահատկությունը ուսուցչի հատուկ դերի մեջ է: Նապետք է ուղղորդի, խթանի և ներգրավի երեխաներին, ցույց տա նրանց այս աշխատանքը կատարելու արժեքը և ակտիվորեն ներգրավի ծնողներին՝ որպես օգնականներ:

Տարրական դասարանների դասագրքերի ստեղծողների խումբը հաշվի է առել այս պահանջները.

- կրթական ծրագրերին համապատասխանելու աստիճանը
- բովանդակային հայեցակարգային ամբողջականությունը
- կառուցվածքի տրամաբանությունը
- աշակերտների ինքնուրույն աշխատանքի ապահովումը
- վերարտադրական, վերլուծական, ստեղծագործական բնույթի առաջադրանքների առկայությունը
- ինքնուրույն մտածողության զարգացման ապահովումը
- սահմանումների հստակությունը
- պարզից բարդ սկզբմունքների կիրառումը
- գրական արժեքների, լեզվի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնել ու ապահովումը

Ընթերցանության հմտությունը հաջողակ ուսման բանալին է: Նպատակը՝
զարգացնել երեխաների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ: Ընթերցանության տեքստերը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին, ճանաչողական և զգացմունքային լինեն:

Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է, որը ձևավորվում է նախնական գիտելիքների, փորձի և կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով և սոցիալական վիճակով:

Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում և քննադատական վերլուծություն:

Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը այս աշխատանքի ընթացքում:

Մասնավորապես կրթական ոլորտում աշխատանքները դոգմատիկ բնույթ չեն կրում, հաճախակի կատարվում են որոշակի բարելավումներ և մշակվում դասավանդման տարբեր մեթոդներ ու մոտեցումներ, որի պարագայում

յուրաքանչյուրը խթանում է դասավանդվող առարկաների ճիշտ ընկալումն ու յուրացումը:

Դրան հասնելու համար յուրաքանչյուր ուսուցչից պահանջվում են մասնագիտական խորը գիտելիքներ և նպատակաուղղված աշխատանք:

Կարդալու հմտությունը ևս ձեռք է բերվում հաջորդական քայլերի հետևողական կիրառմամբ: Այն ձևավորվում է երեք փուլով՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված: Որպեսզի երեխան հմտանա ընթերցանության մեջ, նախ և առաջ անհրաժեշտ է մեծացնել նրա ընթերցանության դաշտը: Այն բավականին բարդ գործընթաց է, որովհետև իրականանում է բազմաշերտ գործընթացների միջոցով՝ մտածողություն,հիշողություն, կամք,ուշադրություն,զգացմունք և այլն:

Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը, նրա նպատակն է՝ զարգացնել երեխաների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակները երեխաներին՝ կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը:

Եթե աշակերտների մեջ ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդական ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի զարգացման միջոց: Այդ իսկ պատճառով ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու,

մասնավորապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը:

Բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցածնյութի բովանդակության մասին ընդհանուր, մակերեսային պատկերացում են կազմում: Այդ պատճառով էլ կարևոր է բնագրի՝ որոշակի առանձնահատկություններով վերընթերցումը, որի ժամանակ երեխաները պետք է ինչ-որ նորություն գտնեն, բացահայտեն, նոր փաստեր, որոնք առաջին ընթերցման ժամանակ չէին նկատել, հակառակ դեպքում վերընթերցումը կվերածվի մեխանիկական ու անհետաքրքիր աշխատանքի: Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասը անարդյունավետ և ձանձրալի չլինի , կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով և հոգածությամբ վերաբերվել գրքին իմանալ գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով վերաբերվել գրադարանի գրքերին:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ:

2. Գրական ակնարկ

Ինչպես նշում է անգլիացի պոետ Ադիսոնը. << Ընթերցանությունը մտքի համար նույն է, ինչ ֆիզիկական վարժությունը մարմնի >>:

Ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է ,որը երեխաների ուսումնառության այս առաջին օղակում իրականացնում է հետևյալ խնդիրներն ու պահանջները:

1.Երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով,զարգացնել լեզվական կարողությունները:

2.Աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական ու հասարակական երևույթների , մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին.

3.Իրականացնել աշխատանք երխաների, բարոյական ,գաղափարական, գեղագիտական,դաստիարակության ուղղությամբ:

Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա է անում մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Ընթերցանություն մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունը՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում նկարազարդ էջը: Աշակերտի բանավոր խոսքի զարգացման համար կարելի է կիրառել ընթերցանության հետևյալ մեթոդները՝

- ուղղորդված ընթերցանություն
- ընտրովի ընթերցանություն
- ընդհատված ընթերցանություն

Մեթոդի ընտրությունը կախված է թեմայից և նպատակից: Նույն թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ՝ կախված նպատակից:

Տեքստի հիմնական գաղափարը հասկանալն ու առանձնացնելը ամենակարևոր հմտություններից է, իսկ տեքստի կառուցվածքային-իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ տարբերակելը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար: Երեխաները պետք է տարբերակեն նաև կարդացած տեքստի

հնչերանգները՝ պատմողական է, հարցական, հրամայական, թե բացականչական:Աշակերտների մեջ պետք է ծավալել զրույց, որպեսզի կիսվեն իրենց տպավորություններով: Այդպիսի զրույց կարդացածի շուրջ կարելի է կազմակերպել թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս: Մեթոդի օգնությամբ կարելի է կազմակորպել հետաքրքիր մտքերի փոխանակման մթնոլորտ, այնպես, որ երեխաները հարգեն միմյանց կարծիքներն ու տեսակետները:

Բանավոր խոսքի զարգացումը տեղի չի ունենում որևէ բան կարդալով կամ պատմելով: Աշակերտը կարիք ունի ոչ միայն գիտելիքների և տեղեկությունների, այլ նաև մտածողության, տեղեկատվության, մշտական և համագործակցային հմտությունների: Բանավոր խոսքի հմտության ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը: Բանավոր խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը և բնագրի դրվագների, խնդուկների,մանրապատումների բեմադրությունը:

Վարժանք-առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղեր են,որոնց կատարումը հաճույք է պատճառում երեխաներին: Խաղը ցանկացած ուսումնական գործընթաց դարձնում է հետաքրքիր և հաճելի: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար օգտակար է կիրառել ուղղորդված ընթերցանություն մեթոդը: Այս մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ զրույցը, բառային աշխատանքը,նյութի մշակումը բովանդակության վերարտադրումը և ամփոփումը:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն հերոսի խոսքերը կամ այն հատվածը,որ իրեն ավելի է դուր գալիս: Սա ստիպում է աշակերտին ոչ թե մեխանիկորեն կարդալ,այլ մտածել կարդացածի շուրջ:

Պետք է ուշադրություն դարձնել կարողություններին և հմտություններին, որպեսզի աշակերտը կարողանա սահուն և հասկանալով ընթերցել հանձնարարված նյութը, տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմության դեպքերը, նկարագրել և բնութագրել գործող անձանց, տրամաբանված ինքնուրույն խոսքը կառուցի, ներկայացնի իր հնարավոր գործողությունները,համանուն իրավիճակում,

գործնականում կիրառի բառակազմական հմտությունները: Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից,թե

նրանք խորությամբ և ճշտությամբ ընկալել և հասկացել են ընթերցած ստեղծագործության գաղափարը, բովանդակությունը, ենթատեքստը, տեղի ունեցող դեպքերը, դրանց մեջ պատճառահետևանքային կապերը, ինչպես և հեղինակի վերաբերմունքը հերոսների նկատմամբ: Այսօր պետությունը դպրոցին լուրջ հանձնարարություն է տվել, հասարակությունը ուսուցման արդյունքում պետք է ստանա զարգացած, կիրթ, բարոյապես ձևավորված և սոցիալապես ակտիվ քաղաքացիներ, որոնց համար սովորելու ձգտումը անհատի կայունորակներից է: Բոլոր ժամանակների և ժողովուրդների հանճարեղ գրողներին ու բանաստեղծներին մտահոգություն է պատճառել մարդկանց բարքերի անկումը և նրանք միայն մի դեղ են առաջարկել՝ ինքնակատարելագործում: Դաստիարակչական գործընթացը կառավարել նշանակում է ոչ միայն զարգացնել ու կատարելագործել մարդու մտավոր ու ֆիզիկական բնածին ունակությունները, այլև ձևավորել անընդհատ ինքնակատարելագործման պահանջունք: Այդ պահանջմունքի բավարարումն անհնար է առանց ընթերցանության և բանավոր խոսքի զարգացման: Կարևորագույն խթանը ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է:

Ընթերցանության կազմակերպման բոլոր մեթոդները օգնում են սովորողի գործուն մասնակցությաը, բանավոր և գրավոր խոսքի, ստեղծագործական մտքի զարգացմանը: Մեթոդները նպաստում են լեզվական կարողությունների և հմտությունների զարգացմանը: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության մեջ և յուրաքանչյուր մեթոդ պետք է ծառայեցնի նյութի լավ յուրացմանը: Ի վերջո կարող են ծագել նաև անսպասելի կամ չնախատեսված հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով: Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհ և որևէ մեթոդ, եղանակ, սկզբունք, հնար, որը չի կարող համարվել միակ ճշմարիտը: Ավելին, առաջարկված մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ, մասնավորապես՝ ժամանակային առումով: Այդ դեպքում կարելի է կիրառել ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այլ դրա առանձին տարրեր կամ հարմարեցնել տվյալ իրավիճակին: Այս բոլոր մեթոդների կիրառությունը հնարավորություն է տալիս ուսուցիչներին և աշակերտներին փոխգործակցել միմյանց հետ: Ուսուցումը պիտի իրականացվի իբրև ակտիվ, երկկողմանի մտավոր գործողություններով հագեցած մի գործընթաց, որի ժամանակ ոչ թե ուսուցիչը գիտելիքներ է հաղորդում, այլ աշակերտը ուսուցչի մանկավարժական վարպետության շնորհիվ ինքն է ձեռք բերում այդ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները՝ անցնելով վերը նշված ճանապարհը: Այսինքն՝ ուսումնական գործունեության համար պատասխանատու են և՛

ուսուցիչը, և՛ աշակերտը: Ընթերցանության նկատմամբ սերը ձևավորվում է դպրոցում, ուրեմն պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գրականություն սիրող, հասկացող ու գնահատող, մշտապես կարդացող, իր հմտությունները կյանքում կենսագործող մարդ դաստիարակելու համար:

8

Ընթերցանության ճիշտ կազմակերպված դասերն աշակերտների մեջ սեր են արթնացնում ընթերցանության նկատմամբ, բացահայտում երեխաների հետաքրքրություններն ու հակումները, դաստիարակում ընկերասիրություն, հայրենասիրություն, ձևավորում գեղագիտական հայացքներ, բարոյական արժեքներ, ընդլայնում ու խորացնում այն գիտելիքները, որ նա ստացել է ինքնուրույն ընթերցանության դասերին:

Այս մեթոդների կիրառման շնորհիվ մենք զարգացնում ենք ոչ միայն երեխաների մոտ ընթերցանությունը, այլ նաև սովորեցնում ենք վերարտադրել ընթերցած նյութը, արտահայտելով միաժամանակ իր սեփական մտքերն ու դատողությունները: Ակտիվ մեթոդների օգնությամբ կարելի է վեր հանել աշակերտների ունեցած գիտելիքները և սովորեցնել այդ գիտելիքները դարձնել կարողություններ և հմտություններ:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիր

Բանավոր խոսքի զարգացման և ընթերցանության ճշգրիտ իրացման հիմնական խնդիրներից մեկն էլ երեխաների մտավոր զարգացումն է, նրաց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ միայն պետք է նպաստեն նրանց կրթական մակարդակի բարձրացմանը, այլև երեխաներին պետք է նախապատրաստեն ավելի բարձր դասարաներում ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացներին: Ընթորցանությունը ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի բառերի, դարձվածքների, լեզվական ձևերի, արտահայտությունների ու բնորոշ համեմատությունների կուտակման միջոց է, այլև լեզվական հմտությունների խոսքի կառուցման , բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման միջոց:Ընթերցանության նյութերի այս նպատակասլացության շնորհիվ էլ հենց ուսուցիչը հնարավորություն ունի այդ նյութերի մշակման ժամանակ երեխաների մեջ որոշակի ապրումներ ու հուզական պահեր ստեղծել և դրանով իսկ նվիրվածության ջերմ զգացմունք առաջացնել դեպի հայրենիքը, ատելություն դեպի մեր երկրի ու ժողովրդի թշնամիները, հիացմունք դեպի նշանվոր մարդկանց կյանքն ու գործը:

Այս ամենը իրականացնելու համար ուսուցչին օգնության է գալիս մայրենի լեզուն <<այդ զարմանալի մանկավարժը >>, որն ի վիճակի է ամեն ինչ այնքան հեշտ ու այնքան խոր կերպով սովորեցնելու, օգնության են գալիս գեղարվեստական գեղեցիկ ստեղծագործությունները՝ իրրնց գրական կերպարներով ու գեղարվեստական խոսքի ներգործությամբ:

Բանավոր խոսքի զարգացմանը ընթերցանության դասը ոչ միայն պետք է գիտելիքներ տա աշակերտին, այլև խթանի նրանց ինքնուրույն մտավոր զարգացմանը, այլև զարգացնի նրանց տրամաբանական մտածողությունը և ինքնագործունեությունը:

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Ծովասար գյուղի Բ.Մուրադյանի անվան IIIդասարանում: Դասարանը բաղկացած է 13 աշակերտներից՝ 7 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և մակարդակ, ընկալողունակության տարբեր աստիճան, տարբեր կարողունակություններ: Բայց ինձ հաջողվում է ընդհանուր առմամբ իմ առջև դրված խնդիրը իրականացնել և , չնայած դասարանը բաժանված է մի քանի մակարդակի, այնուամենայնիվ կարողանում եմ իմ նախանշած վերջնարդյունքները գրանցել:

Մայրենին անցնում եմ շաբաթական 8 ժամ ,որից 4 ժամը՝ ընթերցանություն: Բանավոր խոսքի հմտության ձևավորման և զարգացման առումով շատ կարևոր են ինքնուրույն ընթերցանության դասաժամերը:

3.2.Փորձարարական դաս

Հետևաբար բանավոր խոսքի զարգացումը կազմակերպում են հետևողականորեն, նպատակաուղղված որոշակի համակարգով: Ես ընդգրկում եմ երկրորդ խմբի (մակարդակի) աշակերտներին շեշտը դնելով ուղղորդված առոգանությանբ, գեղոցիկ սահուն ընթեցանության վրա:

Այս ամենը իրականացնում եմ օգտվելով հետևյալ գրականությունից Հովհաննես Թումանյանի

<<Ամենից լավ տունը>>

<<Չարի վերջը>>

<<Կիկոսի մահը>>

Ես նախընտրում եմ տարբերակված ուսուցումը,որն ի հայտկբերի յուրաքանչյուր աշակերտի ընդունակությունները, հետաքրքրությունները ու հակումները:

Տարբերակված ուսուցումը իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1.Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունը.

2.Համապատասխան մակարդակի սովորողներին՝ ըստ իրենց անհատական առանձնահատկությունների:

3.Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Իմ հետազոտության նպատակն է, տարբերակված ուսուցումը, որի օգնություբ բարձրացնել աշակերտների կարդալու կարողությունը:

Պետք է կարողանալ հասնել չափորոշչին համապատասխան ընթերցմանը:

Ես իմ աշխատանքը կիրականացնեմ միջին (խմբի) առաջադիմություն ունեցող աշակերտների հետ:

Միջին խմբի 5 աշակերտ , որը (A, B, C, D, H) տառերով կկոդավորենք:Միջին առաջադիմություն ունեցող աշակերտները կարողանում են կարդալ համեմատաբար հեշտ տեքստեր:

(բ մակարդակ): Տեքստերը լինում են՝ նկարագրական , դատողական և գեղարվեստական :

1. A-----Կարդալիս բաց է թողնում տառեր, երբեմն էլ խախտում է ուղղախոսության կանոնները:

2. C-----Կարդալիս պահպանում է համապատասխան դադարներ:
3. D-----Հիմնականում ընթերցում է ամբողջական բառերով :
4. H-----Հասկանում է ընթերցածի հիմնական միտքը:

Տարբերակված ուսուցման նպատակն է խթանել ստեղծագործությունը՝ օգնելու աշակերտներին ավելի ուժեղ կապեր հաստատել, հասկանալ հարաբերությունները:

Ամենատարածված ներդասարանային տարբերակված ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է :

I-ին մակարդակ.

Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը:Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը:

Իմանալ բառի հիմնական բաղադրիչները. Արմատ, ածանց:

Կարողանալ բառի մեջ տարբերակել արմատը, ածանցը:

II-րդ մակարդակ.

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:

Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ , հասկանալ նրանց զգայական ապրումները : Իմանալ բառի տեսակներն ըստկազմության:

Տարբերակել պարզ և բարդ բառերը:

III-րդ մակարդակ.

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը:

Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ , հասկանալ նրանց զգայական ապրումները: Իմանալ բառի տեսակները ըստկազմության:

Տարբերակել պարզ և բարդ բառերը:

Տարբերակված ուսուցման միջոցով, փորձել եմ նկարագրական , դատողական և գեղարվեստական տեքստեր տալ աշակերտներին՝ ընթերցել և եզրակացրել եմ, որ յուրաքանչյուր աշակերտ կկարողանա հասնել իր նպատակներին, եթե սովորելու ձգտում ունի : Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին առաջադիմություն ունեցող աշակերտներին:

A-Աշակերտը տեքստերը ընթերցում է ճշտորեն,մաքուր արտասանում է բառի բոլոր հնչյունները ՝ պահպանելով ուղղախոսության կանոնները:

Գեղարվեստական տեքստերը ընթերցում է հստակ:

B-Աշակերտի մոտ գրանցվել է առաջընթաց,որի պատճառը հետադարձ կապն է անցած թեմային :

Կարողանում է նկարագրական տեքստերը կարդալ հստակ :

C-Աշակերտի մոտ նկատելի առաջնթաց է եղել , որը երևացել է երկրորդ դասից:

Կարողանում է դերերով ընթերցել դաստիարակող տեքստերը:

D-Աշակերտը ցվրված էր ,բայց վերջում սկսեց հասկանալ, թե ինչպես ազատվի բարբառային բառերից և ընթերցի՝ հասկանալով գլխավոր միտքը:

H-Աշակերտի մոտ գրանցվեց բարձր առաջադիմություն :Նա շատ ջանասեր և հետևողական աղջիկ էր և ձգտում էր հասնել կարդալու որակական հատկանիշներին: Կարդում է, թե՛ գեղարվեստական, թե՛ դաստիարակող և թե՛ նկարագրական տեքստեր:

Այսպիսով՝ աշակերտը պետք է հանդես գա ոչ թե իբրև գիտելիքների ձեռքբերման գործընթացի պասիվ մասնակից,այլ ակտիվ գործընկեր, գիտելիքներ ձեռք բերող, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն, ուսումնական գործընթացի գործուն մասնակից:

3.2.1.Փորձարարական դաս 1

Աշակերտներ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	Կարդալ նկարագրական տեքստեր	Կարդալ դատողական տեքստեր	Կարդալ գեղարվեստական տեքստեր	Կարողանալ կարդացածը վերարտադրել
A	1 2 3	- - -	- - +	- + +	- + -
B	1 2 3	- - -	- + -	- + -	- + +
C	1 2 3	- - -	+ - +	- + -	- - +
D	1 2 3	- - -	- - +	+ - -	- - +
H	1 2 3	- + -	+ - -	+ - +	+ + -

3.2.2.**Փորձարարական դաս 2**

Աշակերտներ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	Կարդալ նկարագրական տեքստեր	Կարդալ գեղարվեստական տեքստեր	Կարդալ դատողական տեքստեր	Կարողանալ կարդացածը վերարտադրել	Ընդամենը
A	1 2 3	+ - -	- - -	- + +	- - +	1 1 2
B	1 2 3	- - +	+ - -	- + -	+ + -	2 2 1
C	1 2 3	+ - -	- + -	+ + -	- + -	2 3 0
D	1 2 3	- + -	+ - -	+ - -	+ + +	3 2 1
H	1 2 3	+ + -	- + -	+ - +	- + +	2 3 2

3.2.3.**Փորձարարական դաս 3**

Աշակերտներ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	Կարդալ նկարագրական տեքստեր	Կարդալ դատողական տեքստեր	Կարդալ գեղարվեստական տեքստեր	Կարողանալ կարդացածը վերարտադրել	Ընդամենը
A	1 2 3	- + +	+ + -	- - +	+ + -	2 3 2
B	1 2 3	+ + -	- + -	- + -	- - +	1 3 1
C	1 2 3	- + +	+ + -	- - +	+ - +	2 2 3
D	1 2 3	- + -	+ + +	- - +	+ + -	2 3 2
H	1 2 3	+ - +	- + +	- + +	+ - +	2 2 4

4.Վերլուծություն

Իմ հետազոտական աշխատանքներում եզրակացրի, որ սովորողների հետտարվող ճիշտ աշխատանքներից է կախված նրանց

գիտելիքների բարձրացումը, որն ամենօրյա նպատակասլաց աշխատանքի արդյունք է, այն դոգմատիկ բնույթ չի կրում, այն յուրաքանչյուր մանկավարժից պահանջում է ստեղծագործական աշխատանք, հաշվի է առնվում սովորողների տարիքային առանձնահատկություններն ու հակումները: Ուսուցման ընթացքում մշակվում են դասավանդման տարբեր մեթոդներ ու մոտեցումներ: Այստեղ մեծ դեր ունի դասավանդող ուսուցչի փորձը, փոխադարձ դասալսումները, սեփական փորձի համատեղումը լավագույն մանկավարժների փորձերին: Այստեղ մեծ նշանակություն ունեն աշխարհաճանաչողական գիտելիքների պարզագույն մատուցումը, սովորողների մեջ սեր առաջացնել դեպի հայրենի բնությունը, շրջապատը: Յուրաքանչյուր սովորող պետք է ճիշտ հասկանա իր դերը շրջապատում , սերը հայրենիքի նկատմամբ, նվիրված լինի իր ծնողներին, հարազատներին ու ընկերներին: Դրա համար մեծ նշանակություն ունի սովորողներին շրջապատում հայրենասիրական և այլ տեսակի ստեղծագործությունների ընթերցումները , որի շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ պետք է կարողանա տարբերակել գլխավորը և երկրորդականը, դրականը և բացասականը:

Սովորողների շրջանում կարդացել եմ մի շարք հեքիաթներ, պատմվածքներ, առակներ ու բանաստեղծություններ :

Հ. Թումանյանի <<Ամենից լավ տունը>> ստեղծագործությունում սովորողների մոտ արթնացնում է սեր դեպի հայրենի տունը, բնօրրանը, <<Չարի վերջը>> ստեղծագործությամբ սովորողը հասկացել է, որ չարը միշտ պարտվում է, իսկ բարին՝ հաղթում:

Հաճախակի հանձնարարել եմ , որ սովորողները պատմեն իրենց իմացած հեքիաթներն ու պատմվածքները, տալ իրենց կողմից սիրված հերոսների անունները: Նման աշխատաքների ընթացքում զարգանում են սովորողների վերարտադրության կարողությունները, իրենց ինքնուրույն արտահայտվելու կարողությունները, իրենց ինքնուրույն մոտեցումները այս կամ այն հերոսների նկատմամբ:

Մեծ տեղ եմ տվել դերերով ընթերցումներին , որտեղ սովորողները ընդօրինակում են հերոսների ձայներին ու շարժումներին , որի ընթացքում յուրաքանչյուր սովորող վերաբերմունք է դրսևորում գործող անձանց արարքների նկատմամբ:

Եզրակացրել եմ ,որ իմ կառուցողական աշխատանքների շնորհիվ կարող եմ հասնել որոշակի հաջողությունների :

Բոլորն այժմ կարդալ գիտեն,ուրեմն փառք... կարդացածը հասկացողին.Պ.Սևակ

5.Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Վարսենիկ Թադևոսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	20.10.21թ	Կիսամյակ	I	Դասարան	III
Թեմա՝	<<Ամենից լավ տունը>>						
Օգտագործվող Նյութեր՝	Դասագիրք, հայրենի տան նկարներ, տոհմածառ:						
Դասի ՝ Նպատակը	. Բնութագրել տղային և նրա վարքագիծը .Դաստիարակել սերը դեպի հայրենիքը,դեպի հայրենի ծննդավայրը:						
ՈՒսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Հասկանա և կարողանա դրսևորի բարեկիրթ վարքագիծ և սերը դեպի ծնողների նկատմամբ :Հասկանա և գիտակցի հայրենիքի և հայրենի տան եզակի լինելու փաստը:Արտահայտիչ արտասանի բանաստեղծությունը:						
Գործողություններ	ՈՒսումնական Գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ՈՒսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ			
2-3ր. Ողջույնի ուղերձ, ներկա բացակա,20-25ր. Հիմնական մաս,իմաստավորման փուլ,7-10կշռադատում,3-5ր. Գնահատում ,անդրադարձ , տնային աշխատանք:	Պատասխանում է հարցերին,պատրաստվում է աշխատանքին, նկարել << գորշ խրճիթը>>,մյուս խումբը նկարել << մեծ ու հոյակապ տներ>>, որոնց ձգտում էր տղան:	Երեխաներից մի քանիսին լսելուց հետո, ուշադրություն ենք հրավիրում այն փաստին,որ աշխարհի ամենալավ տեղը դա մարդու ծննդավայրն է . ու հայրական տունը:	Ըստ բանաստեղծության .Որտեղ էր ապրում տղան,ինչպես է հեղինակը նկարարում տունը: Ձեր կարծիքով ՝ ինչու էր տղան անհանգիստ: Տղան ինչու հեռացավ տնից:	<<Քառաբա-ժան>> մեթոդը. Ինչ տեսա, Ինչ լսեցի ինչ զգացի, Եզրակացրի:			

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Վարսենիկ Թադևոսյան

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ	22-10-21	Կիսամյակ	I	Դասարան	III
Թեմա՝	Չրարի վերջը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, Հովհաննես Թումանյանի <<Բալլադներ և քառյակներ						
Դասի նպատակը՝	.Զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողությունները. .Ամրակայել ստեղծագործական հմտությունները						
Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:							
Վերջնարդյունքները	Արտահայտիր սեփական տեսակետը քննարկի իր ցանկությունները, Խոսի իր զգացումների մասին՝մտքերն արտահայտելով պարզ ու հասկանալի ձևով,մասնակցի քննարկումներին,բանավեճերի,նկարագրի առարկաներ և երևույթներ,օգտագործելով հատկանիշ ցոյց տվող բառեր:						
Գործողություններ Ժամ ,տևողություն	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			
2-3ր.ողջույնի խոսք 5-7ր.խթանում,հիշեցնում:20-25ր հաղորդում հիմնական տեղեկատվությունը ,7-10ր.ճշգրտում,աջակցում,ուղղորդում.3-5ր գնահատում,անդրադարձ, հանձնարարում	Պատասխանում է հարցերին դերային խաղով ներկայացնում են <<Չարի վերջը>>: Աշխատում է. Կատարում է առաջադրանքները, կշռադատում , եզրահանգումներ անում:	Խթանում է ,հիշեցնում է ,հարցեր է տալիս ով է մեղավորը ով անմեղ և վերջում հաղթում է բարին, չարը `պատժվում:Բացատրում ,որ այս աշխարհում բնությունից հավասար են օգտվում:	Ինչ տեսանք , Ինչու կկուն իր ձագերին տվեց աղվեսին, և ինչով ուղղորդվեց կկուն: Ձեր կարծիքով բնության բարիքները բոլորիս հավասար են թե ոչ:	Մտագրոհ, Պրիզմա, ապագայի հանդեպ հետաքրքրող հարցեր:		

Տնային աշխատանք – Բնութագրող բառերով ներկայացնել , կկվին, աղվեսին, ագռավին

Դասապլան-3

Ուսուցիչ՝ Վարսենիկ Թադևոսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	8.11.21թ.	Կիսամյակ	I	Դասարան	III
Թեմա՝	Կիկոսի մահը						
Օգտագործվող Նյութեր՝	Հ.Թումանյանի հեքիաթներ Դասագիրք,նկարներ,որտեղ երևում են հերոսներն՝ ծառն ու քարը:						
Դասի նպատակը՝	Վեր հանել այդ ընտանիքի հիվանդ երևակայությունը,փորձել առողջ Մտածողությամբ ճիստ ուղղու վրա դնել վարքերն ու բարքերը:						
Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	.Այս դասի ընթացքում կսիրեն և կգնահատեն սեփական ընտանիքը, Առողջ փոխհարաբերությունները .Կփորձեն սուտ չխոսալ .Վերաբերմունք կդրսևորեն դեպի արդարությունը						
Գործողություններ Ժամ/տևողություն	Ուսումնական Գործունեությունը Աշակերտ	Ուսումնական գործունեությունը Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ Քառաբաժան մեթոդը			
Ողջույնի խոսք,ներկա բացակա. 20-25ր.իմաստավորման փուլ 7-10ր.կշռադատում 3-5ր. Գնահատում, Անդրադարձ,տնային աշխատանք:	Կփորձեն գեղեցիկ և արտահայտիչ կարդալ,որից հետո կբեմականացնեն:Կքնարկեն և կսովորեն անծանոթ բառերը:	Այս հեքիաթը բազմակողման իորեն հետաքրքրական նյութ է և ինցուոչ՝բացառիկ:Ստի վրա ծնված՝Կիկոսի ծառ բարձրանալն,ը նկնելն ու մահանալը,մեծ վիշտ է պատճառում բոլորին:Միակ իրականը՝ հոգեհացն է:	Ինչ տեսա Ինչ լսեցի Ինչ զգացի: Արդյոք սիրեցին Հ. Թումանյանի այս հեքիաթը:				

6.Գրականության ցանկ

1.Հայոց լեզվի մեթոդիկա/Ա.Ե.Տեր-Գրիգերյան Հայոց լեզվի մեթոդիկաերրորդ գլուխէջ 139-145/

2.Ընթերցանության մեթոդիկա/էջ 93-101/

3.Նախաշավիղ(2.2001) / Ուսուցման մեթոդիկաէջ 18-19/

4.Նախաշավիղ(3.2010) /Ուսուցման մեթոդիկաէջ 9-14/

5. Տարրական դասարանների չափորոշիչներ, ծրագրեր.2006թ. Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ս. Սարգսյան, Ռ. Սարգսյան

6.Մայրենի դասագիրք. Վ. Սարգսյան, Ս. Գրիգորյան, Կ. Թորոսյան